ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԱՋԱԿՑՈՒՄ Է «ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ ՔՈՒՅՐԵՐ» ՄԱՆԿԱՏԱՆ ՍԱՆԵՐԻՆ

28.11.2023 14:18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Շարունակելով մեր ավանդույթը՝ ցանկանում ենք 2023թ. դեկտեմբերի 25-ին՝ ժամը 16:00-ին, այցելել Երևանում «Մայր Թերեզայի քույրեր» միսիոներների բարեգործական կազմակերպության մանկատուն, որտեղ խնամքի տակ են գտնվում ծանր հիվանդ երեխաներ, որոնցից ծնողները հրաժարվել են: Մանկատան երեխաներին օգնություն տրամադրելու, ինչպես նաև նրանց անձամբ այցելելու ցանկություն հայտնած անձինք կարող են info@advocates.am էլ. հասցեին նամակ ուղարկել կամ անհրաժեշտ իրը ստացականով հանձնել Փաստաբանների պալատի ընդունարանի պատասխանատուին:

Մանկատան երեխաներին անհրաժեշտ են հետևյալ իրերը՝ (անսահմանափակ քանակի)

-թարմ մրգեր և բանջարեղեն

- լոգանքի պարագաներ (գել, օճառ...)-Johnson’s Baby

- Լվացքի գել

-կրեմ topi

- Similac,կաթնային խառնուրդ-1,2

- BEBI շիլաներ (каша)

- Huggies, Libero, Puffies տակդիրներ (ցանկացած չափերի)

- տակդիրներ (подкладки,underpads 60*90 սմ)

- թաց անձեռոցիկներ

- շոկոլադե սմայլիկներ գրանդ քենդի

- շոկոլադե կոնֆետներ Kinder (միայն բատոնչիկները, քանի որ երեխաները միայն դա են կարողանում հարմար բռնել)

- բիսկվիթ

- չոկոպայ

- կեքս

-խաղալիքներ, փայտյա խաղալիքներ՝ ձեռքի մկանները զարգացնող (մոտորիկա) (պլաստիլինաներ, ալերգիկ երևույթները բացառելու նպատակով փափուկ խաղալիքներ չեն ընդունվում):

-տոնածառի խաղալիքներ

Մանկատունը օգնում է նաև անապահով ընտանիքներին, ուստի կարող եք ուղարկել նաև հետևյալ իրերը՝

-աթոռակ, մանեժ, քայլակ (կարող է լինել օգտագործված)

-մանկական հագուստ

Մանկատունը գտնվում է Նորք-Մարաշ վարչական շրջանում

Փաստաբանների պալատից կամավորների խումբը մեկնելու է 2023 թ. դեկտեմբերի 25 -ին՝ ժամը 16:00-ին: Եթե ցանկանում եք նաև մանկատուն այցելել ապա խնդրում ենք նախապես տեղեկացնել:

Հարգանքով՝

ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմ

ՀՀ փաստաբանական ակադեմիայի աշխատակազմ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })